

ՊԱՅՄԱՆՔ

ՊՈՒԼԱՐԻԱ

Տարեկան . . 12 Ձր.

Վեցամսեայ . . 6 "

ԱՐՏԱՍՈՒՄԱՆ

Երկու քիւ մեկ ծրարով

Տարեկան . . 14 Ձր.

Վեցամսեայ . . 7 "

ԱՄԵՐԻԿԱ

Տարեկան 2,60 Տօլար

Վեցամսեայ 1,50 "

Կ Ա Ն Խ Ի Կ

Ծանոցման տողը

20 սանդիւ



Լ Ր Ա Գ Ի Ր

Ա Ձ Գ Ա Յ Ի Ն Ե Ի Ք Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն

ԿԸ ՀՐԱՏԱՐԱՆՈՒԻ ԱՄԵՆ ՉՈՐԵՔՇԱՐԹԻ ԵՒ ՇԱՐԹ

ՀԱՍՑԷ

Rédaction du journal

„Iravouk“

VARNA (Bulgarie)

Редакция

на вѣстникъ

„Иравункъ“

ВАРНА (България)

Գրութիւնք եւ

չեմ տրուիր

ԴԱՏԱՊԱՐՏԵԼԻ
ԱՆՏԱՐԲԵՐՈՒԹԻՒՆ

Տօլարիչի մեր ընթերցողներէ
մին հետեւեալ նամակը ուղղած է
մեզ .

... Խմբագիր ,

Իրաւունքի Ձեր թիւի խմբագրա-
կանով յորդոր կարգացած էիք Պուլ-
կարիոյ բազմաթիւ քաղաքներու ազ-
գայնոց , հաւաքաբար դիմում ընելու
պուլկար կառավարութեան , մեր կըր-
թական հաստատութիւններուն նիւ-
թական աջակցութիւն մը խնդրելու
համար :

Ձեր այդ յղացումը շատ լաւ տպա-
ւորութիւն թողոց բոլոր ընթերցո-
ղաց վրայ : Այդ մասին ես տեսակցու-
թիւն մը ունեցայ տեղւոյս նորընտիր
երեսփոխան Տ. Ալէքսանտր Արսէնովի
հետ : Սա խոստացաւ ամէն ջանք ի գործ
դնել հայ հասարակութեան ներկա-
յացնելիք այդ արդար խնդրանքին
գոհացում տալու համար :

Ուստի հաճեցէք Հայոց կողմէ Սօփիա
ղրկուելիք մեր պատուիրակին անունը
եւ հասցէն հաղորդել ինձ որ յիշալ
երեսփոխանին ծանօթացնեմ . որպէսզի
Սօփիա մեկնելուն տեսակցին :

Ի սէր ազգութեան մի խնայէք ձեր
երկաթ գրութիւնը :

Յարութիւն Ունանեան

Տօլարիչ , 18 Ապրիլ 1902

Ահա նիւթականի և զարգացումի
տեսակէտով համեստ , բայց սըր-
տով ու զգացումով շատ բարձր հայ
մը . որ ուրիշ ընթերցողներու նման ,
մեր յիշեալ խմբագրականը կար-
գալէ վերջ « շատ շիտակ է ու
լաւ խորհուրդ է » ըսելով չէ բա-
ւականացած լով , այլ դիմած է իր
բնական քաղաքի երեսփոխանին ,
անոր հարկ եղածը բացատրած և
որոշ խոստում ստացած է : Ու
ինչպէս կերեալ իր նամակի պա-
րունակութենէն , պարտքը մասամբ
կատարած ըլլալու գոհունակու-
թեամբ , այնչափ կենսական խնդ-
րոյ մը համար , ուրիշ աւելի կա-
րեւոր քաղաքներէ պէտք եղածը
կարգադրուած ու պատուիրակն ալ
նշանակուած կարծելով , կը փու-
թայ իր համոզած Տօլարիչի երես-
փոխանին աջակցութիւնն ալ կցե-
լու ջանալ :

Բայց , ո՞վ որո՞ւ . . .

Ազնիւ հայ , երբ իմանաք թէ

« ձայն բարբառոյ յանապատի » է
մնացած այդ կենսական խնդիրը ,
անուշ երազէ սթափողի մը վի-
ճակը պիտի ստանաք անշուշտ , և
արգահատական ակնարկ մը պիտի
դարձնէք այն հայ մանուկներուն ,
որոնց անդառնալի ժամանակները
մեծաւ մասամբ կը կորսուին ի-
րենց ծնողներու մեռելային ան-
փութութեան պատճառաւ :

Պիտի անիծէք անոնց անտար-
բերութիւնը , և թերեւս ձեր այս
յուսակարգութիւնը պուլկարահայոց
ապագայի մասին աւելի ցա-
ւատանջ խորհրդածութիւններու
պիտի մղէ զձեզ , Բայց այս
կարգի հանրային խնդիրներու մէջ
ցարգ մեր ստացած փորձառու-
թիւնը կը խրատէ . զմեզ որ չվհա-
տինք ժողովուրդի դանդաղութե-
նէն , և չը դատապարտենք հասա-
րակութիւնը : Այլ դատապարտենք
միայն այն անձերը որոնք ազգա-
յին գործերու զեկավարութիւնը
ստանձնած են , բայց իրենց յանձնա-
ռութեան կենսական պահանջնե-
րուն հանդէպ միայն դաւաճանա-
լին անհոգութիւն մը ցոյց կու-
տան : Դատապարտենք այն թա-
ղակները , հոգաբարձուները ու
լով աղաները , որոնք իրենց պաշ-
տօնին գլուխը կերելու միայն
հանդէսներու , երեկոյթներու և
եկեղեցական տօնախմբութիւննե-
րու տեսն . որպէսզի ցոյց տան
թէ իրենք ալ բան մըն են ու բան
մը կընեն . ժողովուրդէն դրամ կը
հաւաքեն ազգաւիրաբար , պնակ
կը պտտեն տղքատի ու վար-
ժարանի անունով , ահա այս է
իրենց բոլոր գործունէութիւնը :
Մինչդեռ բուն գործին յաջողու-
թեանը ու ապահովութեանը հա-
մար չեն հաճիր մէկ երկու ժամ
զոհել ու խորհրդակցիլ :

Աչքերնին միայն ժողովուրդէն
առնուելիք դրամին կը տնկեն .
իսկ միւս կողմէ դրսէն ստաց-
ուելիք պատկառելի գումարի մը
համար մեռելային անտարբերու-
թիւն ցոյց կուտան : Հաճոյքներու
ու ցուցամուրութեանց ամբողջ օրեր
կը զոհեն . բայց երբ խնդիրը լուրջ
և առանձնական գործունէութեան
դայ « գործա չնեցիր » ի պատրուակը

իրենց շրթներուն վրայ պատրաստ
է :

Ներկայ խնդրոյ մէջ մեր պաշ-
տօնական մարմիններու ցոյց տուած
դատապարտելի անտարբերութիւնը
անգամ մըն ալ կը խրատէ մեզ , որ
ընտրութեանց ատեն գիտնանք մեր
քուէները գործի-մարգոց տալ , ոչ
թէ տիտղոսասէր ցուցամուրներու :

ԳՈՒՐՊԷՅ

ՌՈՒՍԻՈՅ ԿԱՑՈՒԹԻՒՆԸ

ԲԵՆԴՐԱՅՈՒՐԻ , 14/27 Ապրիլ

Մոսկուայի , Քարխովի և Բօլ-
թավայի մէջ քաղաքական կացու-
թեան ծանր հանգամանք ստացած
ըլլալուն պատճառաւ , ներքին գոր-
ծոց նախարարը այդ քաղաքները
գնաց , որպէսզի տեղւոյն վրայ
ձեռք առնել հարկ տեսնուած մի-
ջոցները մշակէ , որոնցմով կարելի
ըլլայ գործաւորներու և գիւղացի-
ներու յարուցած խռովութիւնները
զսպել :

Այս վերջինները Բօլթավայի և
Քարխովի նահանգներուն մէջ 12
սեփականութիւններ կողոպտած են ,
որոնց և շրջակայներու բնակիչները
սարսափահար փախած են : Այս
շարժումը կը սպառնայ շրջակայ
գաւառներու մէջ ալ տարածուիլ և
նոյնիսկ մեծ քաղաքներու վախ կը
ներշնչէ : Ուր արդէն գործուած
սպանութիւնները ցոյց կուտան թէ
ի մօտոյ յափշտակութիւններ և ու-
րիշ անկարգութիւններ պիտի պա-
տահին . որովհետեւ տիրող ծա-
րայիւ թշուառութիւնը և քաղա-
քական զրգոյիչներու զրգումները
ժողովուրդը գերագրգռեալ վի-
ճակի մը մէջ դրած են :

Քարխովի , Բօլթավայի , Գիէվի
և Մոսկուայի մէջ գործաւորներու
կողմէ նորագոյն խռովութեանց
վերսկսումէն կը վախցուի , ինչպէս
Բեդրսպուրկի մէջ ալ գործա-
դուի ծաւալումէն :

Ոչնչականները . կը շարունակեն
կառավարական շրջանակներու մէջ
իրենց ահաբեկումի դրութիւնը ,
մահուան սպառնալիքներ ուղղելով
զանազան բարձր պաշտօնեանե-
րու :

Նախարար Մ. Սերիակինի սպա-
նութեան առթիւ դատական քնն-
նութիւններու հետեւանօք , սպան-
նողին շատ մը միջոցակիցները յայտ-
նուեցան ու ձերբակալուեցան . ա-
սոնց մէջ , հրեայ մըն ալ կայ որուն
աղջկանը հետ պիտի ամուսնանայ
եղբր սպանիչը : Երբ սա այս ձեր-
բակալութիւնը իմացաւ , ջանաց
խմել հեղուկ մը որ մինչեւ այն ա-
տեն իր քով պահած էր . բայց
զայն ձեռքէն խլեցին անմիջա-
պէս : Այս դէպքը իր անդորրու-
թիւնը շատ խանգարեց :

Նոր կրթական նախարարին
ընտրութիւնը ուսանողներուն վրայ
գէշ տպաւորութիւն ձգեց . որոնք
զանի յետադիմական և խաւարա-
միտ կը նկատեն :

Ֆինլանտիայէ Բեդրսպուրկի ճաւ-
բով լրագրողներու հասած լու-
րերը եւս քան զեւս վրդովիչ են :
Այդ մեծ դժուրութեան մէջ բացար-
ձակ յեղափոխական կացութիւն մը
կը տիրէ , և մէկ վայրկեանէ միւսը
կը սպասուի որ պատերազմական
վիճակ հրատարակուի : Կայսերա-
կան նոր հրովարտակ մը Ֆինլան-
տացւոց կը զեկուցանէ որ՝ եթէ
զինուորական օրէնքին դէմ ան-
հնազանդութիւն մը պատահի , դա-
ւապցոյց պիտի նկատուի թէ ար-
դի վարչական դրութիւնը ահա-
ւական է ապահովելու հանրային
գործերու խաղաղ ընթացքը և
կառավարութեան ազդեցութիւ-
նը :

Ասոր մէջ կը տեսնուի թէ պա-
տերազմական վիճակ հրատարակե-
լու պատեհ առիթ կը համարուի
սա պարագան , որ շատ մը հա-
մայնքներ մերժած են զինուորա-
կան օրէնքին գործադրութեանը
մասնակցիլ և որոնք զինուորա-
կան խորհուրդին անդամակցելու
համար ներկայացուցիչներ չեն նշա-
նակած : Կառավարիչները ծանր
տուգանքի դատապարտած են այդ
համայնքները . Հէլսինկիֆօր դա-
տապարտուեցաւ 30,000 մարգ վճա-
րելու , Համէլքֆօր 35,000 մարգ՝ և
ուրիշ վեց քաղաքներ դատապար-
տուեցան 15,000էն 20,000 մարգ
տուգանքի :

Այս տուգանքները ալ աւելի զայրացուցին այդ քաղաքներու ժողովուրդը և գործերը աւելի բարդ հանգամանք մը ստացան :

Երկրին բժշկական խորհրդոյ նախագահը և շատ մը անդամներ նախամեծար համարեցին իրենց հրաժարականները տալ քան թէ օգնել նոր զօրաժողովի գործառնութեանց, զորս ապօրէն կը նկատեն : Այս կարգի դէպքերէ դատելով, նոր զօրաժողովը խռովութեանց տեղի պիտի տայ, և բնաւ զարմանալի չէ երբ հարկ դատուի գաղափար բերել Հէսինկֆօրի մէջ կարգը վերահաստատելու համար :

Վիէննայէ մայիս 2 թիւ հեռագիր մը կը գտնուի : «Ռուսիայէ առնուած լուրերէն կիսացուի թէ Մոսկուայի վչատիմիր թաղը, ուր զխաւար գործարանները կը գտնուին, ապստամբած է : Ամեն օր կռիւներ տեղի կ'ունենան գործաւորներու և զինուորներու միջեւ : Իւհլան զօրախումբ մը մերժած է գործաւորներուն վրայ կրակ ընելը :

ՅՐԱՆՍԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՄԵՐ ՆԿԱՏՄԱՄԲ

ԲԱՐԻՉ, 30 Ապրիլ

Այնքալ կիրակի (երկու օր առաջ) տեղի ունեցան ֆրանսական ընտրութիւնները, բայց սա զեռ վերջնական չէ, որովհետեւ թեկնածուներէն շատերը չը կարողանալով ունենալ պէտք եղած քուէն անորոշ փիճակ մը առաջ բերին, և ատենց ընտրութիւնը մնաց ինչպէս կը պատահի միշտ ամէն ընտրութեանց ժամանակ — երկրորդ անգամ քուէարկութեան օր տեղի

Ա. ՇԻՏԱՆԵԱՆ (13)

ԹԻԱՊԱՐՏԸ

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

ՎԱՆԻ ԲԱՆՏԸ

— Դիտէ՛ք թէ ամբաստանուած էք իբրեւ մեղսակիցներ Միրզա-Պէկ անուն քուրաի մը սպանութեան, որ գործուեցաւ ասկից քանի մը ամիսներ առաջ :

— Մե՛նք, բացառանչեցին Ռէս Մէլիք ու Տէր Օհան :

— Այո, դո՛ւք :

— Ի՞նչ ապացոյցներով :

— Կատարեալ ու ճշմարիտ փաստեր կան որ կը հաստատեն թէ դուք ոճրագործը տուններէդ պահած էք, թէ ամեն կերպով օգնած էք ապահովցնելու անոր կեանքը եւ թէ, վերջապէս, ամիս մը յետոյ փախցուցած էք : Այս բոլորը յայտնի ու պարզ

պիտի ունենայ մայիսի երկրորդ կիրակիին :

Մինչեւ օրս ընտրութեանը — դեռ՝ կլոր թուով հարիւր երեսուխաւներ կան ընտրելի — եթէ ի նկատի առնենք կը տեսնենք, ընդհանուր առմամբ թէ առաջիկայի կամ գալիք սենեակը պաշտօնագրով եղածէն տարբերութիւն մը չունի, այսինքն անցեալ տարուան սենեակէն ինչ տարրերէ որ բաղմացած էր, զրեթէ ճիշդ միեւնոյն տարրերէն բաղկացած է կամ պիտի բաղկանայ և գալիքը : Անչուշտ մի քանի չնչին տարբերութիւններ կան, օրինակ՝ Բարիզի երեսուխաւներու թուին մէջ նասիօնալիստ կուսակցութիւնը մի քանի անթոռ աւելի շահեցաւ, նոյնը կարելի է բսել և Յրանսայի մեծ կեդրոններուն համար :

Մինչտարականներու թիւր յուսացուած քանակութիւնը չարտադրեց, այնպէս որ հակամիտութեաններու թիւը մինչտարականներու թիւի կիսէն շատ աւելի է : Ընկերվարական կուսակցութեան ներկայացուցիչներէն շատերը — նոյնիսկ մի քանի պետեր — յաղթուեցան, եւն. եւ ուրիշ :

Բայց ինչպէս բսինք, ընդհանուր առմամբ, ինչ որ էր նախկին սենեակը նոյնը պիտի չեսեւ գալիքը :

— Ընտրութեանց երկրորդ օրը՝ երկուշաբթի — որովհետեւ ընտրութեանց հետեւանքը յայտնի եղաւ, մեծաւ մասամբ, կիրակի երեկոյ ութուկէսէն մինչեւ առաւօտեան ժամ մէկուկէսը — մի քանի հայեր վազելով եկան մեր գործակալութեան տեղեկութիւններ առնելու և մանաւանդ հսկելակալու որ ընտրութիւններն ա՛յնքան գէշ հետեւանք ունեցան, այսինքն քնկերվարականները, ազատամիտները, առաջադիմականները, մարգասերները, եւն. եւն. չընտրուեցան :

է կառավարութեան համար, որ ամենեւեմ առարկութիւն չլիցընդհանրեցին մեծ թիւ քաղաքացիներու կէտ մը զոր կը յուսանք որ յանուն օրինաց եւ արդարութեան գուք չպիտի ծածկէք : Այն է թէ ո՛ւր պահած էք ոճրագործին առեւանգած մանկամարդ աղջիկը, որ ձեր տունն եղած է եւ դուք ձերունիք մը հետ մօտ ժամանակներս ճամբու գրած էք զանի ուրիշ գիւղ մը փոխադրելու համար :

— Ամենեւեմ... չեղանք Ռէս Մէլիք : Ատիկա զրպարտութիւն մըն է... ատիկա անարգ դատաւարութիւն մըն է իմ պատուս ու իմ անունիս գէմ : Ես առանկ ոճրագործ մը ո՛չ տեսած եմ ո՛չ ալ անոր մեղսակիցն եղած եմ : Ո՛վ որ անխղճօրէն ատանկ ամբաստանութիւն մը կառավարութեան ըրած է, պարզապէս իմ կեանքիս թշնամին եղած է, եւ ատով թէ՛ ընտանիքս եւ թէ՛ զիս սպաննելու զամ է : Այսչափ միայն կրնամ պատասխանել, կը մնայ օրինաց տրամադրութիւնը... այդ ալ կառավարութեան կը թողուի... այդ ալ գտնաւորներու խղճին կը թողուի :

Հարցաքննիչ դատաւորը գրեթէ ար-

Անչուշտ եթէ ընտրութեանները մեր՝ Հայերուս՝ ուզած մարդիկը լինէին, շատ լաւ բան կը լինէր, այն ատեն գուցէ մենք աւելի համակրութիւն գտնէինք Յրանսական կառավարութեան քով, մեր... սիրուն աչքերուն համար (.) : Անչուշտ ցաւալի է որ մեր գաւառներու ախոյեանները՝ Բոլ տը Գա. առնեալ և Խուար Տրիւմոն Լուրն ինկան, որոց առաջինը՝ թէպէտ թունդ կայսերական միշտ և միշտ լաւ գրած մեր մասին իր լ՛Օլոյտիդէ թերթին մէջ և սենեկին մէջ միշտ պաշտպան կանգնած է Հայերուս, ամէն անգամ որ խօսք բացուած է մեր մասին : Երկրորդը՝ Եգուար Տրիւմոն՝ կատաղի հակասեմական և հիմնադիր հակասեմականութեան, իր Լա Լիպառ Բառոլ թերթին մէջ հարիւրաւոր անգամ ներ՝ մեղ ինչպստ՝ գեղեցիկ յօդուածներ գրած է : Տրիւմոն Բարիզի յայտնի խմբագիրներու մէջէն, Հայոց մասին ամենէն շատ գրողն եղած է : Իրաւ է թէ Բարիզի մէջ հանդիպեցանք մի քանի տիրացու հայերու որոնք Տրիւմոնը կատէին իբր աղանդապետ՝ հակասեմական, և աւելի կը նախադասէին որ նա տող մը իսկ չը գրէ մեզ համար... : Բայց մենք ինչպէս չը ցաւինք այդ մարդուն ինչաւն վրայ, որ առաջինը եղաւ Ֆրանսական մամուլին մէջ, Հայոց ինչպստ ձայն բարձրացնելու, բողոքելու, հասարակաց կարծիքն ցնցելու... : մինչ Բարիզեան մամուլի մեծագոյն մասը — բաղկացած հրեայներէ — կոշ ուսած թուրք դեսպանատունէն կամ ամենայն պատասխանատուութիւն նահատակ Հայերուն վրայ կը դնէր (.) :

Եւ չէ՞ որ ըսուած է թէ «Եւրոյն ինչոզը օձին կը փաթթուի», բնական էր թէ մեր ճգնաժամին մէջ

համարձական ու միանպաստան անհամբեր շարժում մը ըրաւ : Յայտնի բան էր որ Ռէս Մէլիքին բռնաբերը չէր հասկցած, չէր լսած... մէկ խօսքով՝ մտիկ ալ չէր ըրած :

— Կը տեսնեմ որ ինքզինքնիդ պաշտպանելու համար բաւական փաստեր տեսած էք Ռէս Մէլիք, բսաւ հարցաքննիչ դատաւորը : Բայց կը ցաւիմ որ այդ փաստեր չեն կրնար արդարացնել ձեզ : Դիտեցէ՛ք որ կառավարութիւնը գաւառիկներու ձեռքին մէջ գործիք մը չէ : Այդպէս մի՛ կարծէք : Ամբաստանութիւնը կատարեալ ապացոյցներով վրայ հիմնուած է և ապացոյցները մարդուս նկարագրիներէն քաղուած են : Դուք մի՛ զարմանաք : Պարզ կասկածի մը համար չէք բերուած այստեղ : Եթէ հասարակ մարդ մը ըլլաւ ի՞նչ, — այդ ուրիշ բայց ձեր գիրքը բարձր էր կառավարութեան առջին : Ուստի, կըսեմ թէ դուք Միրզա-Պէկի ոճրագործը կը ճանչէք, կըսեմ թէ այդ ոճրագործը ձեր տունին մէջ ամիսներով մնացած է, կըսեմ թէ ոճրագործին տեւանդած աղջիկը ձեր գիտակցութեամբ պահուած է... : Եւ հետեւաբար, կըսեմ թէ դուք Միրզա-Պէկի

ո՛վ որ առաջին անգամ ձեռք կարկառեց մեր համակրութիւնը, մեր երախտագիտութիւնն իրեն գրաւեց : Ասկէ գտտ, մենք Հայերս՝ բուն ազգային տեսակէտով երբ մտածելու որ լինինք — նոյնիսկ եւ թէ տողորուած լինինք համաժողովային և մարդասիրական ամենամեծ և ամենաընդարձակ գաղափարներով — միթէ կրնանք խղճի մտօք, մեծ համակրութիւն մը ունենալ այն ցեղին (հրեայ) համար որ այնքան ստոր վարժուեց մը ունեցաւ կ. Պոլիս Հայերու բնակած տունները բարբարոս խուժանին ցոյց տալով... (.) : (Մնացածը շարաթ օր) :

Մելիք Ս. Դաւիթ-Բեկ

ՀԱՅ ԱՐՈՒԵՍԱԳԷՅՆԵՐԸ

Բարիզի գեղարուեսից պալատի

1902ի ցուցահանդեսին մէջ

Այս աւարի Պ. Զաքար Զաքարեան ունէր երեք զմայելի «նաթիւրմօրթ»ներ : առաջին պատկերը կը ներկայցնէ փոքր սեղանի մը եզերքը գրուած քանի մը դեղձեր, դանակ մը, եւ պարզ գաւաթ մը :

Պ. Զաքարեան արուեստական կատարեալ ներդրեալ իւր ամենապարզ սիրուն գոյներով ունի ուրիշ կտաւ մը որ կը ներկայացնէ հին շէնքի մը ներքին մասը, մուտք եւ տխուր գոյներով, մէջ տեղ գրուած պարզ սեղան մը որուն վրայ կը գտնուի հին ջուլթակ մը, սրինք մը քանի մը «նօթայի» տետրեր ու հեռուն գրուած գիրք մը : Ուրիշ երեք պատկեր պատկեր մը ալ կը ներկայացնէ սքանչելի կերպով նկարուած մի քանի ջրոտ եւ թարմ թուզեր ջրի պարզ գաւաթ մը եւ փոքր դանակ մը :

Մովանկարիչ Պ. Շապանեան ունէր երկու ծովանկարներ : մին արեւու մարը մտնալը, ընդարձակ ովկիանոսի մը վրայ : Իսկ միւսն կը ներկայացնէ վերստին արեւուն մարը մտնալը, ովկիանոսի մը եզերք եւ ալեաց բլրբլուրներու գալը դէպի ցամաք :

ոճիրին մէջ մատ ունեցած էք ուսնոր ոճրագործին մեղսակիցն էք :

— Ես ալ կըսեմ թէ ատիկա զրպարտութիւն է... կըսեմ թէ ատիկա դարձելի դաւադրութիւն մըն է, կրկնեց Ռէս Մէլիք՝ անվեհեր ու աներկիւղ ձայնով մը :

— Կա՛ւ, դուք ի՞նչ կըսէք, Փափաղ Էֆէնտի, հարցուց հարցաքննիչ դատաւորը : Տէր Օհանին ուղղելով իր խօսքերը :

— Ի՞նչ ըսեմ... : ս՛յն որ կառավարութիւնը բացարձակապէս համոզուած է թէ մենք մեղսակցութիւն ունեցել ենք Միրզա-Պէկի սպանութեան մէջ, միթէ՞ պիտի լսուի մեր ձայնը, միթէ՞ կրնանք հակառակել... : Կը մնայ մեզի սպասել որ Արդարութիւնը գործադրէ, ինչ որ՝ մեր պատիժը պիտի ըլլայ :

Հարցաքննիչ դատաւորը չհարուստ կեց հարցաքննութիւնը :

Սատիկանին պիտով նշան մը ըրաւ եւ անոր առաջ-ուրդութեամբ գո. բս ելաւ :

Ռէս Մէլիք եւ Տէր Օհան լուռ մնացին, կասկածելով որ իրենց փախուքն անգամ վտանգաւոր էր :

Ամբողջ գիշերը չկրցան քնանալ :

Պ. Կ. Աղաման ունէր երեք զաւ-
տանկարներ. որք կը ներկայացնէին
Գաղղիոյ գիւղերը բաւական յաջող-
ութեամբ:

Շատ հետաքրքրաշարժ էր նաեւ
դիտել նկարիչ եւ արձանագործ Պ.
Սեպուհի Պէկեանի մէկ կիսարձանը որ
ի տես գրուած էր արձանագործու-
թեան պահին մէջ: Տաղանդաւոր ար-
ձանագործի կիսարձանը կը ներկա-
յացնէ մանկան մը գլուխ յատ ճար-
տար եւ ամօնանորը զգացումով ներ-
շնչուած շատ կենդանի ու ամենաճիշդ
արտայայտութեամբ: Պ. Պէկեան շատ
մեծ փայլ մը ստացած էր արձանագոր-
ծութեան սրահին մէջ ու շատեր կը
դիտէին իւր գործը:

Փորագրիչ Ճ. Էտկար Շահինեան,
ունէր սքանչելի երեք օֆօրներ
փորագրուած կատարեալ արուեստա-
կան նրբութեամբ: Անոնք կը ներկա-
յացնէին Մօմարթի թշուառ կիները
իրենց ֆառափոխներով:

Մ. Մ.

ՎԱՍԱԿ ԹԵ՛ ԻՄԱՍՏԱԿ

Տեղական թերթի մը մէջ Վա-
սակ ստորագրութեամբ Շուկայէ
գրուած վերաբերիչ նամակի մը
առթիւ մեզ զրկուած է հետեւե-
ալ պատասխանը, որուն ուսման
մասը տեւորդ կը դատենք հրա-
տարակել:

Ուսուցչական խումբը միշտ խղճի
մտքը կատարած է իր պարտականու-
թիւնները, եւ եթէ «լուծուած հո-
գարարութեան» անուանական ատե-
նագիւղը չի կրնար կամ չուզեր հաս-
տատել այս ճշմարտութիւնը, վար-
ժարանները կամայ թէ ակամայ մո-
ռացութեան տուած ըլլալուն համար,
հայ մանկտունը բարեկամ ու պաշտ-
պան ուրիշ պաշտօնական մարմիններ
չի պիտի թերանան մեր ըսածները
հաստատել:

Բայց որպէս զի ընթերցողը, քիչ
թէ շատ գաղափար մը կազմէ «Ե...»
թղթակից Պ. Վասակ թէ իմաստակի
բարոյական եւ մտաւոր կարողութեան
վրայ, եւ ըստ այնմ կարեւորութիւն

Առտուն, երբ միջնադ լոյս մը դեռ
նոր թափանցած էր բանտին մէջ, Հա-
սան աղան հկաւ եւ իմացուց թէ հրա-
ման կար զիրենք իրարմէ տարբեր ա-
ռանձնարարներու մէջ գնելու: Թէեւ
զիրեն ատեն պէտք էր գործադրել,
սակայն զիրենք սիրելուն համար չէր
ուզած...:

— Ա՛խ, ատիկա ծանր է մեզի հա-
մար, Հասան աղա՛, մրմնջեց Ռէս
Մէլիք՝ սիրտը ելած տղու մը պէս:

— Ես ի՞նչ ընեմ... ծառայ մըն եմ,
ինչ որ հրամայուած է ինծի, պար-
տական եմ գործադրելու, նկատել
տուաւ բանտապահը՝ ցաւակցական
ձայնով մը:

— Այդպէ՛ս է... իրաւունք ունիք,
յարգեց Ռէս Մէլիքը:

Ու նոյն պահուն համբուրեց Տէր
Օհանիսի ձեռքերը, միտք բարով մը
բաւաւ անոր եւ բաժնուեցաւ:

Տէր Օհան, որ իր բովանդակ կեան-
քին մէջ միայն այդ մարդը սիրած էր
եւ անոր կեանքին կապած էր իր
կեանքը, զգաց որ սիրտը կը խիշար,
զգաց որ այդ բաժանումը շատ դառն
էր իրեն համար:

— Պէտք է հանդուրժել... պէ՛տք է

տայ անոր գրութիւններուն, աւելորդ
չիմ համարեր այժմէն, երկու առա-
ւօտ վարժարան ուշ երթալնուս պատ-
ճառի մասին, մի փոքրիկ բայտարու-
թիւն տալ:

Ի նպաստ վարժարաններու տրուած
թատերական ներկայացման ժամանակ
էր, երբ Պօղոս Մ. Պօյաճեան եւ Յով-
հաննէս Փ. Սայեան, ներկայացման
մէկ շարքով մնացած, իրենց դերերը
ձգեցին ու հեռացան ըսելով «վարժա-
րաններու համար մեր մազն անգամ
չենք տար», որովհետեւ Յովհաննէս
Սայեանի հետ, Հայոց թաղէն հեռու
օտար սենեակի մէջ առանձնացած եւ
կառավարութեան միջոցաւ բռնուած
պաշտօնազուրկ ուսուցչուհի մը, հա-
կառակ իր եւ իր տարփառներին ըրած
դիմումներուն պաշտօնի չէր կոչուած:
(չարթթաթիւթի մը մէջ գրուածները
այս Երկու տարփառներու մասին են
եւ որոնք զօրազգար ճիշդ են):

Յիշեալ պարոններու այս աղէիւ (1)
վարմունքի պատճառաւ եւ նոր դե-
րակառարներու հետ ներկայացումը
որոշուած օրը կարողանալ տալու հա-
մար, մինչեւ ժամը զիշերուան 11/2
կամ երկու փորձ ընելէ յոգնած, մէկ
երկու առաւօտ դասերը փոխանակ
8 1/2-ին 9-ին կամ 9 կէսին սկսած ենք:
Ահա աղէիւ ընթերցող «Մի ին-
քէք»ի հեղինակ Պ. Վասակ թէ իմաս-
տակի տուած տեղեկութիւններու եւ
ըրած քննադատութեան արժէքը: ալ
ընթերցողին կը թողում այսպիսի ին-
կած յօդուածագիր մը որակել, մենք
չենք գիտեր Վասակ անուանենք թէ
իմաստա՛յ, թէ ոչ երկուքը մէկէն ա-
ւելի կը զարդարեն Սիւնի մակա-
նունը:

Ա-ԼՆ

Շուկայ, 3 Ապրիլ 1903

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Հարիւրի չափ հայ գաղթական-
ներ Տփղիսի Հայոց եկեղեցիին մէջ
երգում ըրած են ուսու կաթափա-
րութեան հաւատարիմ հպատակ
մնալու:

— Տ. Ներսէս Թաւրեանց, որ
վերջերս Տփղիսի մէջ մեռաւ, 150

արիւնալ այս աղետաւոր տառապանք-
ներուն մէջ, մտածեց տէր Օհան ինք-
նիրենը: Մեզի համար բան մը չկայ...
շատ շատ մահուան պիտի դատապար-
տուինք: Ըլլալիքն այս է: Բայց ա-
զատ պիտի ըլլան այն թշուառ Լա-
լեղարն ու Վանականը: Ասիկա բա-
ւական է:

Տէր Օհանի այս վերջ ու հոգեբուր-
խօսքերը բոլորովին անկեղծ էին: Ա-
նիկա պարզ գեղացի քահանայ մը
չէր: Ա՛յն գերազանցօրէն բարձր կո-
չումին մէջ, որուն փարած էր բոլոր
անձնութեան թեմաք, անիկա մարմնա-
ցում մըն էր բարութեան ու առարի-
նութեան: Մէկ խօսքով իր քիչ շատ
զարգացած գաղափարներով, Տէր Օ-
հան հոգեւոր հրեշտակ մըն էր:

Այն օրէն, ուր Տէր Օհան իր բո-
վանդակ անձնութեան թեմաքը Ազգա-
յին անկախութեան Ս. գործին մէջ
նստուեցաւ, բոլորովին տարբեր մարդ
մը դարձաւ... Իր Աւետարանին ու
Խաչին սրբութեանց քով յեղափոխա-
կան վարդապետութիւնը գրաւ: Ի՛նչ
զոզողացումով մը որ պատարագի
խորհրդին կը մօտենար, նոյն այն
զոզողացումով սուրբ գործին անունը

հազար բուրդի կտակած է Երեւանի
Հայոց վարժարաններուն:

— Մոսկուայէ Լ'Առմէնիի կը
գրեն թէ Տ. Յակոբ Էփրէմէր 10
հազար ֆրանք նուիրած է Պարս-
կաստանի մէջ հայ վարժարան մը
հաստատելու համար: Վարժարանը
պիտի կրէ նուիրատուին հանգուց-
եալ հօր անունը, «վարժարան
Տիրան Էփրէմէր»:

— Կիպրոսի Որբանոցին օժան-
դակելու նպատակաւ Բարիզի Հայ
գաղութիւն յանձնարարութեամբ մը վերա-
կազմած է Ընտրուած են Տ. Կ.
Բէշլիվանեան նախագահ, Տ. Զո-
րեան զանձապետ, Տ. Զպուգ-
ճեան քարտուղար, Տիրան Խան
Քէլէկեան եւ Տ. Արամ Սէթեան
խորհրդականներ: Փափաքելի է որ
նոր յանձնարարութեամբ կրկնապատկէ
իր ջանքը այդ Որբանոցը կրթա-
կան եւ ուսումնական տեսակէտով
աւելի բարձր դիրքի մը կարենան
վերածելու համար:

— Տ. Ալեքսանտր Մանթաշեանց
Պոլսոյ Աղդ. Հիւանդանոցին տա-
րեկան պէտքերն չսփ քարիւղ նուէր
կը զրկէր ամէն տարի: Սակայն
ժամանակէ մը ի վեր դադարեցու-
ցած ըլլալով, վեհ. Կաթողիկոսը
նամակաւ մը յորդորած է այդ մե-
ծահարուստ աղջկային որ շարուն-
ակէ իր նուիրատուութիւնը:

— Եւրոպայի Հայ Ուսանողաց
Միութեան կազմած տեղեկագրու-
թեան նայելով, Եւրոպայի հա-
մարարանները յաճախող հայ ու-
սանողներու ընդհանուր թիւը 271-ի
կը հասնի: ասոնց 6ը Պէլճիգայի
մէջ, 7ը Անգլիոյ, 25ը Իտալիոյ,
26ը Աւստրիոյ, 54ը Զուիցերիոյ,
70ը Ֆրանսայի եւ 86ը Գերմանիոյ
մէջ կուսանին:

ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ

Ռուսիոյ ներքին գործոց նախարար
Արիստակիսը սպաննող Պալմաշէֆի հետ

կարտայայտէր իր շրթանց վրայ...
Այսպէս, բանտին տխուր ու զար-
հուրելի դարչութեանց մէջ կարծես
ձայն մը կը լսուէր որ Տէր Օհանին
կըսէր. «Մի՛ վատիր, առաքինի
մարդու համար նախախնամութիւնը
կայ»:

ՎԱՆԱԿԱՆԸ ԲԱՆՏԻՄ ՄԷՋ

Ռէս Մէլիքին առանձնարարներ պար-
զապէս գարշելի նկուղ մըն էր, որուն
մէկ անկիւնը խոշոր ու հաստ գերանի
մը դամուած երկաթէ օղակ մը կար,
որմէ ծանր շղթայ մը անցուցած էր:

Այդ ժանգոտած շղթան այսօր ան-
ցուած էր Ռէս Մէլիքին ոտքերուն՝
կղպւած անուրով մը: Կարծես թէ
այդ մարդը ձեռքերէն արիւն կաթող
եղեռնագործ մը ըլլար, որուն վրայ
այնպէ՛ս մը կը նային, ինչպէս պիտի
նայէին սեւ օձի մը վրայ:

Ամեն յարաբերութենէ զրկած էին
զինքը: Այնքա՛ն խիստ հսկողութեան
մը տակ առնուած էր, որ ոտականի
մը միջոցաւ պատառ մը սեւ հաց կը
ստանար եւ օրուան մէջ երկու անգամ

բանտին մէջ տեսակցութիւն մը ունե-
ցած է բարձրաստիճան անձնաւորու-
թիւն մը:

Պալմաշէֆի բանտը 2 մէթր երկայ-
նութիւն եւ մէկուկէս մէթր լայնու-
թիւն ունեցող խորշ մըն է. ուր ա-
ւելի առաջ փակուած են ի մէջ այլոց
Ալեքսանդր Բ. Կայսեր սպանիչը եւ
յետոյ կրթական նախարար Պօլօյէթոս
վը զարնողը:

Պալմաշէֆ յաղթանգամ եւ խրոխտ
ղեմքով երիտասարդ մըն է: Երբ ի-
րեն հարցուեցաւ թէ ինչ պատճառներէ
զրկուած այդ ոճիւրը գործած է, մի
քիչ վարանուէլ յետոյ պատասխանեց.
«Այդ պատճառները հարցուցէք Սիպե-
րիա աքսորուած 500 ուսանողներուն.
հարցուցէք այն ընտանիքներուն որոնց
երջանկութիւնը խանգարեց Սիբիա-
կինը»: Յետոյ, ոգեւորուած կերպա-
րանքով մը յայտարարեց թէ ինք կը
պատկանի համալսարանական այն
տարբին որ կոչու կը մը յետադիմու-
թեան դէմ, ամբոխին ճամբայ ցոյց
կուտայ բռնութեան դէմ բռնութիւն
ի գործ գնելով, գործաւորները եւ
գիւղացիները լուսաւորելով, որոնք
ղեւ Ս. Սիւնդին գերեի են:

«Ուսանողները, աւելցուց նա,
հաստատօրէն կազմակերպուած են, եւ
եթէ կառավարութիւնը չհամակերպի,
Ռուսիան քիչ ատենէ իր յեղափոխու-
թիւնը պիտի ունենայ: Յանձնա-
խումբը (գօմիթէ) ցուցակը պատրաս-
տած է բոլոր անոնց, որոնք Ռու-
սիոյ ազատ զարգացման կը հակառա-
կին: անոնցմէ մին ինկաւ, բայց միւս
68ը դեռ րոքի վրայ են»: Այս խօս-
քերը արտասանելէ յետոյ Պալմաշէֆ
չուզեց աւելի բան մը ըսել:

ԻՐԱՆԻՈՒՆՔԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

Տ. Ս. Գրիգեան, Կուս-Ռաքիս. —
Ձեր զրկած չիք վերջապէս յաջողած
ենք գանձել:

Տ. Ա. Փ. Ռուչում. — Թերթը ձեր
անունով քաղաքի կը զրկենք:

Տ. Վ. Ռաչում, Գարեհայր. —
Իրաւունքը 12 ֆրանք վագթընտա
գապուլ օլընմըլ տըր: Պորճընըզ
եօգ:

միայն անոր երեսը կը տեսնէր:

Շարքով մը ամբողջ այս անագորոյն
գրութեան մէջ մնաց: Տեղեկութիւն
չուէր թէ ինչ եղած էր Տէր Օհան:
Իսկ գեղէն ու մանաւանդ իր մէկ հա-
տիկ պաշտելի աղջիկէն լուր մը առած
չէր:

Այդ պատճառաւ գիշեր մը չափա-
զանց լացաւ... ու խորին կսկծանքով
մը իր շղթաներուն վրայ ինկաւ...:

Որչա՛փ ատեն այդ վիճակին մէջ
մնացած էր... Աստուած գիտէ՛. միայն
թէ կէս գիշերուան մօտ էր, երբ ա-
ռանձնարարին դուռը բացուեցաւ եւ
կիւղալի զգուշութեամբ մը եւ երի-
տասարդ մը ներս մտաւ:

Այս երիտասարդը, — որուն գէմքը
առանձնարարին մէջ վառուած հողէ
ճրագին առկայծ պղպտցումովը
ստուերի մը պէս պատկերուեցաւ, —
մեր ծանօթ վանականն էր:

(Շարունակելի)

ፆኮኮቶቶሁ

ሥራ ስራ

ル　ロ　ハ　ウ　エ

3 P U 6 V U

ሆኮኮፑቲኒቲሂሂኮፊ

ԹԻԻՃՃԱՐԻՅԷ

ՀԱՌՆԱ, 24 Ապրիլ
ԶԱԽԻՐԷ

ԲԱՄՈՒՔ

ՍԱՐԲԱՖԻՅԷ

Նախուխն 22 ֆրանք 60 սանթ .
Օսմ. լիբասը 23 ալթուհ ֆրանք

ՊԱԳԳԱԼԻՅԷ

ՈՒՇԱԴՐ ՈՒԹԻՒՆ

Одговорникъ Н. Драгулевъ

Печ на Хр. Н. Войниковъ—Варна